ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Էդուարդ Զոհրաբյան

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ.

Հիմնաբառեր. պատմափուլ, ազատականացում, գաղափարաբանություն, միատարր հասարակություն, հայագիտություն, փոխակերպում, ազատագրական շարժում, Մեծ եղեռն, ազգային մտածողություն, այլախոհություն, կեղծարարություն, գաղափարազրկում*:*

Հոդվածում փաստական նյութի հիման վրա վերլուծվում է Խորհրդային Հայաստանում 1930-1980-ական թթ. հասարակության գաղափարական վերափոխման գործընթացը՝ լծորդելով հայագիտության առաջընթացին: Հիմնահարցը դիտարկվում է քննարկվող ժամանակաշրջանում խորհրդային հասարակության կյանքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, ներքաղաքական վերափոխությունների համատեքստում: Ազգային մտածողության և մտակեցվածքի դրսևորումները հետպատերազմյան երկու տասնամյակներին վերածվեցին հայագիտության ոլորտում նոր ձեռքբերումների: Պատմությունը, ստանալով ազգային նկարագիր, սկսեց անձնավորվել, խորացավ ազգային ինքնության ձևավորման իմաստավորումը: Ազգային ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության արգելված թեմաների քննարկումները հասունացրին հայ քաղաքական միտքը, հիմք դրվեց քաղաքական հայագիտությանը: Հայագիտությունը այդ շրջանում նպաստեց ազգային պայքարի մոտիվացմանը:

Հայ հասարակության գաղափարական և արժեբանական համակարգերի փոխակերպման բազմագործոն հիմնախնդրի գիտական հետազոտության պահանջը մեր ժամանակներում առավել քան արդիական է: Հետհամայնավարական անցումաշրջանում ազգային հանրույթի հոգևոր միասնականությունն անհնար է առանց նրա գաղափարախոսական միասնության[1]: Հայաստանում հետհամայնավարական տարիներին խորթ, արատավոր արժեքների ներխուժման, հասարակության գաղափարազրկման, դեգրադացման և դրանց հետևանքով բարոյազրկման գործընթացների իրողությունների խորապատկերի վրա ավելի քան հրամայական է ոչ հեռավոր անցյալի՝ խորհրդային տարիների՝ 1930-1980-ական թթ. հայ գաղափարաբանության էության և դրա էվոլուցիայի վերարժեքավորումը: Այդ գաղափարաբանության սաղմնավորումն ու առաջընթացը, որը դարձավ հայ հասարակության ազգային մտածողության փոխակերպման վճռական գործոն, ազգային ինքնության գիտակցման իմաստավորման տեսանկյունից անառարկելիորեն խարսխված էր, մասնավորապես, հայագիտության ձեռքբերումների վրա:

Բոլոր դարաշրջաններում հասարակությունների բնականոն ու ցնցումնազերծ գոյության համար վճռական նշանակություն է ունեցել գաղափարական գործոնը: Գաղափարական տարատեսակությունները, սկսած հնագույն ժամանակների հավատալիք-պաշտամունք կրոնադավանաբանական պատկերացումներից մինչև մերօրյա կուսակցական գաղափարախոսական ընկալումները, որոշիչ են եղել հասարակությունների թե՛ ներքին կյանքի կազմակերպման, թե՛ արտաքին վտանգների դիմակայության տեսանկյունից:

Այս առումներով բացառություն չէր կազմում խորհրդային պետությունը, որի 70- ամյա գոյության ընթացքում նրա ղեկավարները «ցանկացած գաղափարախոսություն նույնացնում էին դասակարգային շահերի, գիտակցության, համոզմունքների ու տրամադրությունների հետ..., ժխտում էին ազգային շահերով ու արժեքներով առաջնորդվող գաղափարախոսության վերդասակարգային բնույթը»[2]:

Սույն հոդվածի նպատակն է քննական վերլուծությամբ ներկայացնել Խորհրդային Հայաստանում 1930-1980-ական թթ. հասարակության գաղափարական փոխակերպումների գործընթացը և հայագիտության ազդեցությունը դրա վրա:

* Հոդվածը ներկայացվել է 15.12.2021 թ., գրախոսվել՝ 20.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Տե՛ս Հարությունյան Մ., Ազգային գաղափարախոսությունը հետամբողջատիրական շրջանում, «Հայք» հաստատություն, Տեղեկագիր, Ե., հուլիս, 1995, N13, էջ 42:

[2] Տե՛ս Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 25:

Առաջադրված նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

ա. լուսաբանել խորհրդային հասարակական-քաղաքական տեղաշարժերի և փոփոխությունների ընթացքը հայագիտության զարգացման համատեքստում,

բ. վեր հանել հայագիտության առաջընթացի նոր միտումները որպես հայաստանյան հանրային կյանքի գաղափարաբանական մոտիվացման գործոններ,

գ. արժևորել եկեղեցու դերը հայագիտության առաջընթացի գործում,

դ. դիտարկել հայագիտության և հայրենադարձության գործոնի հարաբերակցության խնդիրը,

ե. բացահայտել հայագիտության դերակատարությունը խորհրդահայ հասարակության գաղափարական փոխակերպությունների մեջ,

զ. ցույց տալ գաղափարական փոխակերպումների մոտիվացնող դերը հայ հասարակության ազգային կենսական և սոցիալական խնդիրների նկատմամբ:

1930-ական թթ., չնայած խորհրդային ամբողջատիրության և գաղափարական խիստ չափակարգված մթնոլորտի առկայությանը, հասարակական մտածողության մեջ առարկայական և ենթակայական մի շարք գործոնների ազդեցությամբ ծլարձակեցին ազգային գաղափարաբանության վերածնման առաջին սերմերը: Այդ գործընթացում անառարկելի է հայագիտության դերը: 1930-ական թթ. վերջերից, որքան էլ պարադոքսալ է, Խորհրդային Հայաստանում հայագիտության հենքի վրա սկսվեց հասարակության գաղափարական փոխակերպման դեպի ազգայինը միտված պատմափուլ:

Խորհրդային Հայաստանի 1930-1980-ական թթ պատմությունը, ինչպես հասարակական կյանքի մյուս, այնպես էլ գիտության, այդ թվում նաև հայագիտության զարգացման բնագավառներում պայմանականորեն բաժանվում է երկու փուլերի: Դրանց միջև սահմանագիծը ստալինյան դարաշրջանի ավարտն էր՝ 1953 թվականը, որից հետո խորհրդային հասարակությունը հայտնվեց նոր՝ հարաբերական ազատականության իրավիճակում: Հայագիտության և ազգային գաղափարաբանության ձևավորման դիտան-կյունից այս երկու փուլերն ունեցել են իրենց ինքնատիպ դրսևորումները: Վստահաբար կարող ենք պնդել, որ ամենակաղապարված, խիստ գաղափարայնացված հասարակության մեջ ազգայինը զարգացնելու հնարա-վորություններն ավելի իրատեսական են, ինչն ապա-ցուցվում է պատմական փորձով, քան գաղափարազուրկ և դրան զուգակցվող բարոյական արժեքներից զուրկ, ազգային դիմախեղված հասարակություններում, որտեղ պերմանենտ փորձարարություններն աղետալի են ցանկացած հասարակության համար:

Խորհրդահայ հասարակության գաղափարական փոխակերպման գործընթացի միտումներն ու արդյունքները վերաիմասավորելն ու հետազոտման միա-կողմանիությունը հաղթահարելը հնարավոր են բացառապես հիմնախնդիրը խորհրդային հասարակության պատմության ամբողջական ընթացքի մեջ դիտարկելու միջոցով:

Դեռևս 1930-ական թթ. երկրորդ կեսը նշանավորվեց ԽՍՀՄ հասարակության նոր պատմաշրջան թևակոխմամբ: 1936 թ. սահմանադրությունն արձանագրում էր սոցիալիզմի հիմնականում կառուցման մասին, որի գաղափարական և սոցիալական նպատակը միա-տարր հասարակության ձևավորումն էր՝ երկրի արդյունաբերացման, գյուղի համատարած կոլեկտիվացման, անգրագիտության հաղթահարման, կուսակցական ընդդիմության վերացման հենքի վրա:

Հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին միակուսակցական ընդհանրական գաղափարախոսությանը, որին հավելվեց ազգային բաղադրիչը: Այդ պատմափուլում խորհրդային գաղափարախոսության մեջ անհերքելի է շրջադարձը ազգային հարցի նկատմամբ: Վերջինս կոմունիզմի վերացական գաղափարախոսությանը հաղորդում էր կոկրետ բովանդակություն, և այն իր արտահայտությունը գտավ խորհրդային «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» կարգախոսում: Այս կարգախոսի գործնական կիրառումը դարձավ ազգային ինքնության գիտակցմանը խթանող որոշիչ գործոն: Ինչպես ճշտորեն նկատում է Ս. Սարինյանը, «միատարր հասարակության միակուսակցական աշխարհայացքի գաղափարախոսությանն ուղղվեց մտավոր գործունեության ամբողջ համակարգը: Հասարակական կենցաղավարության մեջ վերականգնվում են ժողովրդական տոներն ու արարողությունները[1]»:

[1] Տե՛ս Սարինյան Ս., Հայ գաղափարաբանություն, պատմաքննական տեսություն, Ե., 1998, էջ 132-133:

Տակավին 1935 թ. մեծանուն պատմաբան Ա. Հովհաննիսյանը Մոսկվայում լույս ընծայեց Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերը», որը հայ պատմաբաններին հուշում էր առավել ուշադիր լինել հայ ազատագրական պայքարի պատմության նկատմամբ[1]:

1938 թ. նոյեմբերին «Պրավդայում» Հայաստանի Մատենադարանի մասին տպագրված հոդվածով սկիզբ դրվեց ազգային պատմական արժեքների գնահատմանը: Հոդվածում Հայաստանն անվանվում էր «ամենաարժեքավոր պատմական հնությունների երկիր[2]»: ՀԿ(բ)Կ կենտկոմի 1938 թ. հուլիսի 11-ի նամակ-առաջարկությամբ[3] 1939 թ. սեպտեմբերին Մոսկվայում մեծ շուքով նշվեց «Սասունցի Դավիթ» ազգային էպոսի հազարամյակը: Այս իրողությունն աննախադեպ էր խորհրդահայ հասարակության ազգային մշակութային ժառանգության և պատմական հավաքական հիշողության գնահատման տեսանկյունից:

1938 թ. դեկտեմբերի 21-ին Կենտկոմի բյուրոյում Գ. Հարությունյանը հարց բարձրացրեց հայ գրականության դասական Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները 6 հատորով, «Ընտիր երկերը» հայերեն ու ռուսերեն հրատարակելու մասին: Որոշվեց նաև բանաստեղծի արձանը կանգնեցնել Երևանում[4]:

ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն 1940 թ. փետրվարի 17-ի որոշմամբ անբավարար էր համարում Մատենադարանում հայ մշակութային գիտական ժառանգության հետազոտման ուղղությամբ տարվող աշխատանքները և նոր պահանջներ առաջադրեց դրանց աշխուժացման ուղղությամբ[5]:

Նախապատերազմյան այս պատմափուլը նշանավորվեց անցյալի վերաբերյալ պատմական հիշողության վերականգնման գործընթացով: Հազարամյակների պատմության վերարժեքավորումը Խորհրդային Հայաստանում նպաստեց հանրային գիտակցության մեջ ազգային գաղափարների վերածնմանը և քաղաքական հասունացման սկզբնավորմանը: Այդ գործընթացը շարունակվեց և ավելի առարկայական դրսևորվեց նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Բուռն զարգացում ապրեցին հայագիտության գրեթե բոլոր մյուս ճյուղերը: Հայ լեզվաբանության, գրականության, պատմության, մշակույթի վերաբերյալ լույս տեսան Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Ս. Մալխասյանի, Գ. Ղափանցյանի, Հ. Մանանդյանի, Լեոյի և այլոց բազմաթիվ արժեքավոր և մնայուն աշխատություններ: Հայագիտական հետազոտությունները, ըստ էության, լծորդվում էին գաղափարական ազգային ուղղվածությանը:

1941 թ. հունիսի 22-ին սկսված Հայրենական մեծ պատերազմը նոր խնդիրներ առաջադրեց հայ ստեղծագործական մտավորականությանը: Պատմության վերար-ժեքավորման շարունակվող միտումներում հայ գրականության մեջ շրջադարձ կատարվեց դեպի հայրենասիրական, հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքա-րի թեմատիկան: Մեկը մյուսի ետևից լույս տեսան Ա. Իսահակյանի ռազմաշունչ բանաստեղծությունները, Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» դրաման, «Վարդանանք» և Ս. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը, Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Խ. Դաշտենցի «Տիգրան Մեծ», Հ. Քոչարի, Գ. Սարյանի, Ա. Վշտունու, Հ. Սահյանի, Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի ստեղծագործությունները: Հրատարակվեցին գրականագետ Ա. Տերտերյանի «Հայ հայրենասեր գրողները. Ղազարոս Աղայան և Հովհաննես Թումանյան», «Ղևոնդ Ալիշանը և հայրենասիրությունը», Հ. Կուսիկյանի «Հայրենիքի պաշտպանության գաղափարը հայոց հին գրականության մեջ», Ա. Ղանալանյանի «Հայրենական կռիվները և ֆոլկլորի հերոս-ները» արժեքավոր աշխատությունները: 1944 թ. լույս տեսավ Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը, իսկ 1944-1945 թթ. հրատարակվեցին Ս. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանի» չորս հատորները[6]: Դրանք անխտիր բոլորն էլ արտացոլում էին տվյալ պատմափուլում գաղափարաբանության պատմական այն առաքելությունը, որը, խարսխված ազգային հավաքական հիշողությանը, բանաձևում էր ապագայում ազգային կյանքի հեռանկարներն ու նպատակները: Թեպետ պաշտոնական գաղափարախոսությունը իր դրոշմն էր դնում հայագիտության տարաբնույթ հարցերի մեկնաբանության վրա, այդուհանդերձ ազգային մտածողության շեշտադրումները աստիճանաբար դառնում էին առարկայական:

---

[1] Տե՛ս Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, խմբագրությամբ և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյան, Երևան-Մոսկվա, 1935:

[2] Տե՛ս Սովետահայ գրականության տարեգրություն, Ե., 1957, էջ 355:

[3] Տե՛ս Միկոյան Ն., Ավետիսյան Հ., Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը, Ե., 2000, էջ 146:

[4] Տե՛ս Միրզոյան Հ., Հայաստանի խորհրդային տիրակալները, Ե., 2013, էջ 139:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ148-149:

[6] Տե՛ս Միկոյան Ն., Ավետիսյան Հ., Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը, Ե., 2000, էջ 106-107:

Հատկանշական է այն իրողությունը, որ 1930-ական թթ. վերջերից սկսած՝ ուրվագծվում էր հայ քաղաքական էլիտայի ազգային դիմագիծը, որը Հայրենական պատերազմի շրջանում էլ ավելի արտահայտիչ դարձավ: Դրա դևսևորումը եղավ Հայրենական մեծ պատերազմի դրամատիկ իրադարձությունների շրջանում՝ 1943 թ. նոյեմբերին, Հայաստանի ղեկավարության, մասնավորապես ՀԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանի նպատակադիր ջանքերի շնորհիվ ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի թ. 702 որոշմամբ ՀԽՍՀ գիտությունների ակադեմայի հիմնադրումը[1]: Ակադեմիան, ինչպես գրում էր Ա. Իսահակյանը, պետք է «գիտական անսպառ անալիզի բովով անցկացնե մեր բովանդակ կուլտուրան և կազմե նրա սինթեզը՝ հայտնաբերելով բյուրեղացած, անվիճելի արժեքներ ազգային և համամարդկային իմաստով [2] »: Ակադեմիայի հիմնադրմամբ հասարակագիտական, ինչպես նաև հայագիտության բոլոր ուղղությունների և դրանք հետազոտող մտավոր ներուժի համար լայն հեռանկարներ բացվեցին: Գիտությունների ակադեմիայի գոյությամբ հիմք դրվեց հայ բազմադարյան գիտական հարուստ և անանց ժառանգությունը, ավանդույթները խորհրդային շրջանի գիտությանը շաղկապելու մշակույթի արմատավորմանը [3] : Պատահական չէ, որ ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի առաջին կազմը զուտ հայագիտական ուղղվածություն ուներ՝ Հ. Օրբելի, Հ. Աճառյան, Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Ս. Մալխասյան, Ա. Իսահակյան,Գ. Ղափանցյան և Ա. Տերտերյան:

Ազգային հայրենասիրական գրականության զարգացումն իր հերթին խթանեց հայ կինոարվեստի զարգացումը: 1943-1944 թթ. Հայկինոն Համո Բեկնազարյանի բեմադրությամբ նկարահանեց «Դավիթ Բեկ» գեղարվեստական լիամետրաժ ֆիլմը:

1944 թ. հունիսին ՀամԿ(բ)Կ կենտկոմի գիտությամբ Գ. Հարությունյանը Երևան հրավիրվեց անվանի պատմաբան, ռուս-թուրքական հարաբերությունների բնագավառում հեղինակություն, ակադեմիկոս Եվգենի Տարլեին: Հրավերքի ընթացքում նրանք քննարկեցին նաև Արևմտյան Հայաստանը Խորհրդային Հայաստանին միավորելու հարցի մասին բոլոր տեսակետները[4]:

Հայագիտության զարգացման և նրա միջոցով ազգային գաղափարները հանրայնացնելու, ազգային ինքնագիտակցությունը ամրապնդելու և մտակեցվածք ձևավորելու բարդ գործընթացը շարունակվեց հետպատերազմյան տարիներին: Հայ պատմիչների աշխատությունները ընթերցող լայն շրջաններին մատչելի ներկայացնելու նպատակով սկսվեց դրանց աշխարհաբար թարգմանությունը: Այդ գործում առաջնեկներից էր Ս. Մալխասյանցը, որը 1940 թ. թարգմանաբար լույս ընծայեց պատմահայր Մ. Խորենացու «Պատմություն Հայոց» աշխատությունը[5]: 1941 թ. ակադեմիկոս Մ. Աբեղյանը աշխարհաբար թարգմանությամբ հրատարակեց «Վարք Մաշտոցի» աշխատությունը, իսկ 1946 թ. բանասիրական գիտությունների դոկտոր Ե. Տեր-Մինասյանը հրատարակեց «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունը: 1947 թ. Ս. Մալխասյանցը աշխարհաբար թարգմանեց նաև Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» աշխատությունը[6]:

Հասարակության ազգային գաղափարական մոտիվացիայի առումով կարևոր նշանակություն ունեցան նաև հայ հին մատենագիտության ուսումնասիրությունն ու հրատարակությունը: Հրատարակվեցին մի շարք աշխատություններ՝ Ռ. Աբրահամյանի, Բ. Թումանյանի, Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Բախշյանի «Անանիա Շիրակացի» (1958թ.), Ս. Մելիք-Բախշյանի և Թ. Հակոբյանի «Մեսրոպ Մաշտոց» (1959 թ.), «Ստեփանոս Օրբելյան» (1959 թ.), Վ. Նալբանդյանի «Եղիշե» (1960 թ.), Զ. Հարությունյանի «Ղազար Փարպեցի» (1962 թ.)[7]:

Որոշակի փոփոխություն կրեց հայ եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը: Գ. Հարությունյանի խնդրանքով դեռևս 1943 թ. ստեղծվեց Հայ եկեղեցու գործերի գծով խորհուրդ, որի կազմում, ընդառաջելով Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի ցանկությանը, ընդգրկեցին լեզվաբան Հրաչյա Աճառյանին և հնագետ Կարո Ղաֆադարյանին:

---

[1] ՀԱԱ, Ֆ. 113, g. 16, գ. 747, թ. 2:

[2] Տե՛ս Իսահակյան Ավ, Եժ, հ. 5, 1977, էջ 371:

[3] Տե՛ս Զոհրաբյան Է., գիտության զարգացումը Հայաստանում 1960-1980-ական թվականներին, Ե., 2016, էջ 34:

[4] Տե՛ս Միրզոյան Հ., Հայաստանի խորհրդային տիրակալները, Ե., 2013, էջ 147:

[5] Տե՛ս Պողոսյան Ս., Աբրահամյան Ա., Սուքիասյան Ա., Բդոյան Վ., Իգնատյան Ա., Հայագիտությունը Հայաստանում 50 տարում, Ե., 1971, էջ 183:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 184:

Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքչյանի եռանդուն ջանքերով նախկին «Արարատ» հանդեսի փոխարեն ստեղծվեց «Էջմիածին» հանդեսը, որի հրատարակությունը պաշտոնապես թույլատրվեց 1944 թ.: Վերջինս իր անվիճելի ծառայությունը բերեց հայագիտության զարգացման գործում: Ամսագրի էջերում զետեղված հոգևոր հիմնահարցերի կողքին նշանակալի տեղ էր հատկացվում հայագիտության հարցերին: Ամսագիրը գիտական-ստեղծագործական լայն համագործակցություն հաստատեց Մատենադարանի, ՀԽՍՀ ԳԱ-ի, Երևանի պետական համալսարանի և հայագիտական այլ հաստատությունների հետ: Եկեղեցու և նրա «Էջմիածին» հանդեսի համագործակցությունն ավելի ընդլայնվեց, մասնավորաբար, նրա իմաստուն ու գիտամեծար հովվապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կաթողիկոսական գահակալության տարիներին:Նրան հաջողվեց փոխել մթնոլորտը «Էջմիածին» հանդեսի շուրջ, որի հաջողություններն ու ձեռք բերած բարձր վարկանիշը Ս. Էջմիածնի եկեղեցական կյանքը վերահսկող մարմինների կողմից համարժեք վերաբերմունքի չէին արժանանում: Ամենայն Հայոց Վազգեն Ա հայրապետի ջանքերով պայմաններ ստեղծվեցին ամսագրի պարբերական լույսընծայման համար: Այն վերածվեց համահայկական, համազգային երևույթի՝ կամրջելով եկեղեցին պետությանը, սփյուռքը՝ հայրենիքին:

Աննկատ չի կարելի թողնել այն, որ երբ խորհրդահայ պատմագիտությունը դատապարտված էր ազգային ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության, բռնադատված և հայաթափված հայրենիքի վերաբերյալ հարկադրական լռության, այդ բացը 1940-ականների կեսերից լրացվում էր հանրապետության բարձր ղեկավարության, կուսակցական, պետական-հասարակական, հոգևոր գործիչների կողմից: 1945 թ. ապրիլի 19-ին ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինի հետ հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, ի թիվս սբ. Էջմիածնի իրավունքների վերականգնման, հոգևոր ճեմարանի վերաբացման, նրա գրադարանը վերադարձնելու, տպարան բացելու հարցերի, առաջադրեց հայկական հողերի և սփյուռքահայության վերադարձի խնդիրները:

1945 թ. ապրիլի սկզբներին ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը դիմեց Ի. Ստալինին սփյուռքահայության հայրենադարձությունը նախապատրաստելու նպատակով «Սովետական Հայաստան» անունով ամսագիր հրատարակելու մասին[1]: Իսկ մայիսի 15-ին նա ՀամԿ(բ)Կ կենտկոմ, Ի. Ստալինին դիմեց լայնամասշտաբ հայրենադարձություն կազմակերպելու խնդրանքով: Նամակում ասվում էր, որ «հատկապես աշխույժ խոսակցություն է ընթանում մտավորականության շրջանում, որոնք սկսել են բացահայտ արտահայտվել այն մասին, որ ուկրաինական, բելառուսական և այլ ժողովուրդների միավորումից հետո խորհրդային կառավարությունը մեծ տերությունների երեք ղեկավարների հանդիպման ժամանակ կդնի Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիային անցած տարածքների Խորհրդային Հայաստանի հետ միավորման հարցը»[2]:

1945 թ. Հայկոմկուսի ղեկավարը հայրենադարձության հարցի հետ կապված ԽՍՀՄ ղեկավարի առջև հարց բարձրացրեց Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու վերաբերյալ: Այդ նամակը հիմնավորվում էր «Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությամբ, այդ բնակչության մշակութային-զանգվածային և քաղաքական սպասարկումը մայրենի լեզվով ուժեղացնելու, ազգային կադրերին մայրենի լեզվով բարձրագույն կրթության հնարավորություն ընձեռելու և Ղարաբաղի նախկին կենտրոնի՝ **Շուշի քաղաքի վերականգնման**» փաստարկներով: Հայաստանի քաղաքական ղեկավարի իմաստուն և համարձակ այս քայլը աներեր խիզախության և հեռատեսության դրսևորում էր, մանավանդ նախորդ տասնամյակներում՝ Անդրֆեդերացիայի տարիներին, հարևան երկու հանրապետությունների կողմից քողարկված բռնազավթումների և «Հայաստանը բաժան-բաժան անելու» և որպես վարչական միավոր վերացնելու ծրագրի [3] չեզոքացման տեսանկյունից:

1946 թ. փետրվարի 1-ին հանդիպելով իր ընտրողների հետ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորությոն թեկնածու Գ. Հարությունյանը հիմնականում խոսեց «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» հարցի մասին՝ նշելով, որ

---

[1] Տե՛ս Միկոյան Ն., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 160-180:

[2] ՀԱԱ, Ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 40-41:

[3] Տե՛ս Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Ե., 1994, էջ, 184-186:

«…հաստատակամորեն կգտնենք մեր առաջադրած հարցի դրական լուծումը»: Սակայն այս անգամ էլ հարցը չլուծվեց:

Հատկանշական է վրացական ղեկավարության որդրեգրած վարքագիծը այս հարցի նկատմամբ, որով փորձեցին ներկայանալ արևմտահայ երկրամասերի իրավատեր՝ կասկածի տակ դնելով Հայաստանին միավորվելիք այդ տարածքների պատկանելության իրավական հիմքերը: Ավելորդ չէ նկատել, որ կոմունիստական միահեծան գաղափարախոսության շրջանակներում հռչակված «ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկա-մության» կարգախոսի ներքո, ինչպես վրաց, այնպես էլ ադրբեջանական պատմագրության կողմից կողոպտվում էին մեր պատմության շատ էջեր, խեղաթյուրվում էր տարածաշրջանի պատմությունը: Կեղծարարությունն ու պատմության նենգափոխումը շարունակվեցին նաև հետագայում:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում սկսեց նաև Արցախի պատմության խեղաթյուրումը: Շարունակվում էր Նախիջևանի հայաթափումը: Հայագիտությունից հանիրավի աստիճանաբար դուրս մղվեց աղվանագիտությունը, որից ճարպկորեն օգտվեցին ադրբեջանցի կեղծարարները: Հայրենական պատերազմի ավարտից հետո ձախողվեց Ադրբեջանի կոմկուսի քարտուղար Մ. Բաղիրովի կողմից իրանական Ադրբեջանում անջատողական գործողությունների իրականացումը, որի նպատակը պատմական Ատրպատականը Խորհրդային Ադրբեջանին միացնելն էր: Այլ կերպ ասած՝ քննություն չբռնեց, այսպես կոչված, «մարական տեսությունը»: Ադրբեջանական կեղծ պատմաշինարարությունը այս անգամ սևեռվեց դեպի Աղվանքի պատմությունը: Ադրբեջանական պատմագիտության ներկայացուցիչները, հմտորեն օգտվելով պատմության կեղծարարության հայտնի մեթոդներից, 1960-ականների սկզբից առաջ քաշեցին իրենց ծագումնաբանության մի նոր՝ ուշ աղվանական տեսությունը: Դրան հակառակ՝ հայագիտությունը աղվանագիտության առումով նահանջ արձանագրեց:

Արթնացող ազգային գաղափարաբանությունը ճեղքեց Սփյուռքի և Հայաստանի միջև անջրպետը: 1946 թ. Հայաստանի գրողների երկրորդ համագումարում հատուկ զեկուցում նվիրվեց սփյուռքահայ գրականությանը: Խնդրո առարկայի լուսաբանման դիտանկյունից էական նշանակություն ունեցավ հայրենադարձությունը: Դժբախտաբար, 1948 թվականից ազգային ավանդների, պատմության վերարժևորման ազգային ըմբռնումներին փոխարինելու եկան անցյալի իդեալականացման, բուրժուական ազգայնականության հասկացությունները, հայ գաղափարաբանությունը նահանջ ապրեց: Դեռևս 1952 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ 16-րդ համագումարում քննարկվող օրակարգի առանցքային հարցերից մեկն էլ նվիրված էր «Միասնական հոսանքի» հայեցակարգին: Կենտկոմի գաղափարական գծով քարտուղար Զ. Գրիգորյանը նշում էր այն գիտնականներին, որոնք «ազգային հարցն անջատում են ընդհանուր քաղաքական հարցերից, այն դարձնում ինքնուրույն հարց՝ դրանով իսկ գլորվելով բուրժուազիայի և պրոլետարիատի «համատեղ գործողության միասնական հողը» դրույթի դիրքերը»[1]:

1953 թ. Ի. Ստալինի մահից հետո հայ հասարակական քաղաքական մտքի աշխուժացումը, խարսխված խորհրդային պետության քաղաքականության որոշակի փոփոխություններին, հնարավորություն ընձեռեց խորհրդահայ պատմագրությանը խախտելու Հայոց ցեղասպանության վերաբերյալ 40-ամյա լռությունը: Հայրենական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության հիմնահարցի շուրջ պարտադրված մոտավորապես քառորդդարյա լռության քողը պատռելու առաջին քայլերը ձեռնարկեց և Եղեռնի պատմության գիտական ուսումնասիրության հիմքերը դրեց ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, որը դեռևս 1946 թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ (1850-1870 թթ.)» թեմայով, որը 1955 թ. հրատարակվեց իբրև մենագրություն[2]:

1950-ական թթ. երկրորդ կեսին շարունակվեցին հայագիտության բնագավառի տարբեր ճյուղերի հետազոտական ավանդական աշխատանքները: Տակավին 1958 թ. ՀԽՍՀ ԳԱ-ում ստեղծվեց արևելագիտության սեկտոր: 1959 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի համապատասխան բաժնի հիման վրա կազմակերպվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, որի հիմնադրմամբ Հայաստանում սկսվել է հնագիտության զարգացման մի նոր շրջափուլ[3]:

---

[1] Տե՛ս Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., 2001, էջ 150:

[2] Տե՛ս Կարապետյան Մ., Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 1998,198-199:

[3] ՀԱԱ, Ֆ. 766, ց. 3, գ. 325, էջ 6:

1961 թ. լույս տեսավ Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության» առաջին հատորը՝ 70 մամուլ ծավալով, որը հրատարակվեց ՀԽՍՀ ԳԱ-ի կողմից: Այն բազմակողմանի և հարուստ մի կատարյալ հանրագիտարան է, որի դերը մեծ է ոչ միայն հայագիտության, այլև արևելագիտության, պատմության, բանասիրության խնդիրներով զբաղվողների համար[1]: 1962 թ. ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գրադարանին կից ստեղծվեց հայագիտական բաժանմունք՝ Հայագիտական բազմալեզու գրականություն և գիտական տեղեկատվության սեկտորներով: Դրա հետ միասին հայագիտական հետազոտությունները թեմատիկ առումով դարձան ավելի բազմազան և ընդգրկուն: Ձևավորվեցին նախադրյալներ հայագիտության զարգացման նոր ձեռքբերումների համար, որոնց հենքի վրա նախանշվեց հայագիտական նոր կենտրոնների առաջացման պահանջը: Նկատելի դարձավ հայագիտական կադրերի պատրաստման գործընթացի աշխուժացումը: Ընդլայնվեց հայագիտական հետազոտությունների աշխարհագրությունը:

Հայաստանյան հասարակության՝ ազգային հավաքական հիշողությանը խարսխված՝ գաղափարաբանության նախընթաց և հետպատերազմյան երկու տասնամյակներում ամբարված ուժը ժայթքեց 1965 թ. Հայոց մեծ եղեռն-ցեղասպանության 50-ամյա տարելիցին: Հայկոմկուսի կենտկոմի հանձնարարությամբ 1964 թ. օգոստոսի 17-ին կազմվեց հանձնաժողով, որի կազմում էին ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, այդ օրերին մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտոր Ծ. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի վարիչ Գ. Ինճիկյանը և Հայկոմկուսի կենտկոմի գաղափարական բաժնի վարիչ Ձ. Կիրակոսյանը: Նրանց հանձնարարված էր մշակել միջոցառումների պլան՝ պատշաճ ձևով նշելու Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը: Այս քայլով սկիզբ դրվեց այն իրադարձությունների, որոնք ծավալվեցին 1965 թ. ապիլի 24-ին Երևանում: Հայրենանվեր հայ մտավորականությունը 1966 թ. մարտին 1906 ստորագրությամբ դիմեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսի քարտուղարներ Վ. Ախունդովին և Ա. Քոչինյանին՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղի միացումը մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին[2]:

Իր չորսուկես տասնամյա գործունեության ընթացքում Հայկոմկուսի ղեկավարությունն առաջին անգամ պաշտոնապես ընդունեց Մեծ եղեռնը և բարձրաձայնեց, որ երիտթուրքերը Արևմտյան Հայստանում պետական մակարդակով ոչնչացրել են մեկուկես միլիոն հայերի:

1965-1966 թթ. շրջադարձային էին խորհրդահայ պատմագիտության համար: Հիմք դրվեց քաղաքական հայագիտությանը՝ ի դեմս Մ. Ներսիսյանի, Ձ Կիրակոսյանի, Ա. Մնացականյանի, Ռ. Սահակյանի, որոնք լույս ընծայեցին մի քանի արժեքավոր աշխատություններ:

Արդեն դժվար էր կասեցնել ազատականացմամբ արթնացած մտավոր շարժման տարերքը և կաղապարել մարքսիզմի սխեմաների մեջ: Տեղի էր ունենում համատարած և ընդհանուր մի ոգևորություն մտավոր գործունեության բոլոր ասպարեզներում՝ հասարակական միտքը լարելով ազգային մտավորականության ազատամիտ ու ուղղափառ թևերի գաղափարական բանավեճով: Բանավեճի այս ընդհանուր մթնոլորտում ձևավորվեց 60-ականների սերունդը՝ իր վրա վերցնելով արժեքների վերագնահատության առաքելությունը[3]:

1960-1980-ական թթ. ստեղծված հայագիտական ժառանգությունը նոր ուղենիշներ արձանագրեց, որով ազգային մտածողության սաղմեր ներարկվեցին համայն հայության շրջանում: Հայագիտությունը լուրջ ազդակ դարձավ հանրապետության հասարակական քաղաքական կյանքի հետագա զարգացման համար: Այն, օգտվելով բարենպաստ իրավիճակներից, ոչ միայն ճանապարհ հարթեց գիտական առաջընթացի համար, այլև նպաստեց հայաստանյան հասարակության ազգային ըմբռնումների նոր մոտիվացիայի ձևավորմանը, աստիճանաբար հող նախապատրաստելով արժեբանական նոր ընկալումների համար՝ կերպափոխեց և թանձրացրեց ազգային մտածողությունը: Այս շրջանում սկզբնավորված ազգային զարթոնքը վերելք ապրեց: Հասարակության գաղափարական մտածողության դինամիկայի անվիճելի արտահայտությունը եղավ այլախոհական խմբերի և կազմակերպությունների հանդես գալը, որոնց համար ևս առանցքայինը ազգային խնդիրներն էին:

---

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1962, 21 հունվարի:

[2] ՀԱԱ, Ֆ.1, ց. 46, գ. 65, թ. 15-31:

[3] Տե՛ս Սարինյան Ս., Հայ գաղափարաբանություն, պատմաքննական տեսություն, Ե.,1998, էջ 157-158:

Շարունակվում էին հայագիտության բնագավառի տարբեր ճյուղերի հետազոտական ավանդական աշխատանքները: 1971 թ. հրատարակվեց «Հայա-գիտությունը 50 տարում» արժեքավոր աշխատության առաջին պրակը:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի և հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի 1969 թ. հունվարի 15-ի և օգոստոսի 1-ի որոշումներով 1970 թ. վերջին ՀԽՍՀ ԳԱ նախագահությանը կից ստեղծվեց ինքնուրույն՝ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտոր Հայկական ԽՍՀ-ում հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության դրվածքը բարելավելու նպատակով [1]:

1980-ական թթ. հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի թուրքագետ-արևելագետների, ՀԽՍՀ արտգործնախարարության համատեղ ջանքերով հրատարակվեցին «Թուրք հեղինակները Հայկական հարցի մասին», «Թեոդոր հերցլը և Հայկական հարցը», «Վավերագրական նյութեր հայերի մասին», «Արևելյան Անատոլիան և Ուրարտուն» բյուլետենները:

Ազգային գաղափարաբանության տարածման, հանրային գիտակցության մեջ ազգային ինքնության գիտականորեն վերաիմաստավորման, ազգային վերածնունդի գաղափարի ամրապնդման տեսանկյունից անվիճելի է «Հայկական սովետական հանրագիտարանի» հրատարակումը: 1964 թ. հոկտեմբերի 6-ին Յա. Զարոբյանը ստորագրեց ՀԿԿ կենտկոմի որոշումը «Խորհրդային Հայաստանի հանրագիտարանի հրատարակության մասին»: 1967 թ. ՀԽՍՀ ԳԱ նախագահությանը կից ստեղծվեց «Հայկական սովետական հանրագիտարանի» հատուկ գիտական խմբագրություն: Մինչև 1987 թ. հրատարակվեցին հանրագիտարանի 50 հազար տերմին պարունակող 12 և 1 լրացուցիչ հատորները:

1984 թ. ավարտվեց «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի (ութ հատորյակ) լույսընծայումը: 1986 թ. այն արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի:

1983 թ. սկսեց հրատարակվել Թ. Հակոբյանի, Ս. Մելիք Բախշյանի, Հ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» (քառահատոր), որը բովանդակում է 140 հազար տեղանուն, 150 պատմական քարտեզ, որոնք ունեն արդիական հույժ կարևոր նշանակություն տարածաշրջանի բազմաբարդ տարածքային ու սահմանային խնդիրների հանգուցալուծման առումով:

Այսպիսով, 1980-ականների վերջերից հասարակական հին հարա-բերությունների փոխակերպման գաղափարական նախադրյալները, որոնք ուղեկցում էին արցախյան հայ ազգային ազատագրական շարժմանը, նախանշվել և մշակվել էին հենց խորհրդահայ մտավորականության, մասնավորապես հայագիտության բնագավառի ներկայացուցիչների կողմից: Այդ կապակցությամբ պրոֆեսոր Ա. Ենգոյանը գրում է. «Այսպիսով սոցիալիստական գաղափարախոսությունը ժողովրդավարության սկզբունքների իր ըմբռնումով ինքը նախապատրաստեց խորհրդային քաղաքական վարչակարգի փլուզումը»[2]:

Հասարակության ընդերքում ազգային գաղափարաբանության ամրակայվող գործընթացն ուղեկցվում էր ազգային միասնության և համերաշխության իրողություններով: Այդ առիթով է. Հարությունյանը գրում է. «Քանի դեռ անկախ պետականության և պահանջատիրության գաղափարներն ընկալվում էին ազգային արժանապատվության տեսանկյունից, գործում էր նաև զգացմունքային համերաշխության դաշտը: Ըստ էության, այդ դաշտի հիմքում ընկած էր նախկին սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերին ընդդիմանալու գաղափարը» [3] : Այդ գաղափարը ևս ակունքվել էր տակավին խորհրդային հասարակագիտական մտքի նստվածքաշերտերում, որն առավել ակներև դարձավ 1980-ական թթ. կեսերից ԽՍՀՄ-ում սկսված վերափոխությունների խորապատկերի վրա. կոմունիստական միահեծան կաղապարված գաղափարա-խոսությունը սկսեց ճեղքեր տալ, որոնք ավելի նկատելի դարձան արտաքին գաղափարական ազդեցությունների ներթափանցման շնորհիվ:

Հետխորհրդային շրջանում հայաստանյան հասարակությունը ոչ միայն արտաքին գաղափարական բազմազան ազդեցությունների տակ ընկավ, այլև երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ոչ օրինակարգ և ձևախեղված հասարակական հարաբերությունների

---

[1] Տե՛ս Բարսեղյան Խ., Հասարակական գիտությունների գիտական ինֆորմատիկայի պրոբլեմները ՀԽՍՀ-ում, Ե., 1982, էջ 134:

[2] Енгоян А. П., Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Ереван, 2011, с. 128.

[3] Տե՛ս Հարությունյան է., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Ե., 2000, էջ 180:

ու անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտում ենթարկվեց լայնամասշտաբ, ծայրահեղ բևեռացման, մարգինալացվեց, դեգրադացվեց, գաղափարազրկվեց և բարոյազրկվեց: Ազգային գաղափարախոսությունը ի սկզբանե մերժվեց, պատմությունը համարվեց կեղծ գիտություն: Լայն ասպարեզ բացվեց ապազգային գաղափարների արմատավորման համար, և հասարակությունը սկսեց ենթարկվել զանազան փորձարարությունների, որոնց դառնաղետ հետևանքները ճաշակում ենք այսօր ազգովի:

Эдуард Зограбян, ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ. В статье на основе фактического материала анализируется процесс развития арменоведения в Советской Армении и идеологических трансформаций общества под его влиянием в 1930-1980 годах. Вопрос рассматривается в контексте перемен происшедших в социально-экономической, внутриполитической жизни советского общества в упомянутом историческом периоде.

Проявления национального мышления и менталитета, обозначенные на основе арменоведения еще в предыдущий период, в течение двух послевоенных десятилетий сами превратились в новые достижения в сфере арменоведения. История, получившая национальный облик, стала олицетворяться, еще более углубилось осмысление осознания национальной идентичности. Обсуждение эпизодов борьбы за национальное освобождение, а также обсуждение запрещенных тем Геноцида армян созрело в армянской политической мысли, было положено начало политическому арменоведению.

Арменоведение в этот период способствовало мотивации общества к национальной борьбе.

Ключевые слова: эпоха, либерализация, идеология, однородное общество, арменоведение, трансформация, освободительное движение, национальное мышление, диссидент, фальсификация, Геноцид армян, безидейный.

Eduard Zohrabyan, THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980. The article analyzes the process of development of Armenian studies in Soviet Armenia and the ideological transformations of society under its influence in 1930-1980. The question is considered in the context of the changes that took place in the socio-economic and domestic political life of the Soviet society in the mentioned historical period.

The manifestations of national thinking and mentality that were identified on the basis of Armenian studies in the previous period, during the two post-war decades, themselves turned into new achievements in the field of Armenian studies. History, which has received a national image, has become personified, and the understanding of the awareness of national identity has deepened even more.

The discussion of episodes of the struggle for national liberation, as well as the discussion of forbidden topics of the Armenian Genocide, has matured into Armenian political thought, and the beginning of political Armenian studies has been laid.

Armenian studies during this period contributed to the motivation of the society for the national struggle.

Key words: historical period, ideology, transformation, society, Armenian studies, national thinking, mentality, national liberation, Armenian Genocide, falsification of history, national struggle.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300